



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

150 տարիներ անցեր են Մեծն Կոմիտասի ծննդեան թուականին:

Սոյն խմբագրականով չենք ուզեր թերգնահատել մեր Ազգային եւ եկեղեցական երաժշտութեան բոլոր մշակները, որոնք ժամանակին ըրին ու տուին իրենց կարելին մեր ժողովրդական եւ կրօնական երաժշտութեան, դարերու ընթացքին:

Անկասկած, Աննման Կոմիտաս Վարդապետի երաժշտութեան հոգեպարար կախարդանքը մեզի կու գայ ժողովուրդի տրտում, բայց միաժամանակ քաղցր լինելութենէն, որովհետեւ մարդիկ իրենց ժամանակին պատկանելէն աւելի կը պատկանին իրենց ժողովուրդին, եւ անոնք որոնք՝ քիչ թէ շատ ծանօթ են Կոմիտաս Վարդապետի մեզի թողած երաժշտական աւանդին, անպայման կը հասկնան թէ ուրիշ կու գար անոր աստուածապարգեւ երաժշտական տաղանդը: Դժբախտաբար, այս օրերուն հայու հոգին ի վիճակի չէ երկինքներու քաղցրութեան հրդեհը վար իջեցնելու, ինչպէս կ'ընէին մեր երբեմնի հայրենիքի մտաւորականները:

Մերօրեայ մտաւորականներու կշիռ մը կազմելը թերեւս ներկայիս դժուար ըլլայ, որովհետեւ մարդիկ մեծ կ'ըլլան համաձայն իրենց ձգտումներուն: Անշուշտ մեծ են անոնք՝ որոնք կը փորձեն ընել իրենց կարելին, սակայն մեծագործ են անոնք՝ որոնք գիտեն անկարելին վերածել կարելիի, գոնէ բնութեան եւ մարդկային ընկերութեան պայմաններուն ներած չափով, եւ Անմահ Կոմիտաս մէկն էր ասոնցմէ: Ան եղաւ Հայկական երաժշտութեան Մեսրոպ Մաշտոցը, որ նուիրեց իր կեանքը իր Ստեղծիչին եւ ատով իր կարգին կարենալ ազգային նկարագիր մը տալու մեր հոգեւոր եւ ժողովրդական երաժշտութեան: Քէօթահիւս, համեստ ընտանիքի մը մէջ ծնած փոքրիկ Սողոմոնը, սահմանուած էր մեծութեան եւ ապագայի այդ համեստ կրօնականը՝ Կո-

միտաս Վարդապետ, գտաւ ճամբան երկնային լոյսը բերելու իր ժողովուրդին: Ան գիտցաւ երկնքի լոյսը բերել իր հայրենի ժողովուրդին:

Ըստուած է թէ անհատներ, նման ազգերու, կ'ապրին միայն հոգեկանով, որ է լեզու, գիր եւ արուեստ: Անոնք որոնք կը յաղթեն իրենց մէջ գտնուող աշխարհին, անոնք իսկական մեծութիւններ են, եւ Մեծ Վարդապետը՝ Կոմիտաս եղաւ մին այդ մեծութիւններէն, որ յաղթահարեց կեանքի, մանաւանդ Եւրոպական ոստաններու փորձութիւններուն ու դժուարութիւններուն, մղած միակ ձգտումէ մը, Հայ երաժշտական արուեստը ներկայացնելու Եւրոպական հանրութեան: Մինչեւ Կոմիտաս, ո՞վ կամ ո՞ր հայ երաժշտագէտը գիտցաւ իրագործել ա՛յն՝ ինչ որ Անմահ Վարդապետը ըրաւ, որ մեր ժողովուրդի լինելութեան արմատներէն ծաղկեցուց մեր երաժշտութիւնը: Յետագարձ հայեացք մը երկվայրկեանի համար Կոմիտասի բացառիկ անձին վրայ, արդէն ենթական կը լեցնէ անբացատրելի հիացումով, հակառակ իր փխրուն ֆիզիքականին, սակայն միաժամանակ ունեցած հոգեկան անասելի մեծութեան: Ինչպէ՞ս եւ ուրկէ՞ էր անոր այդ քաղցր, սակայն միաժամանակ հզօր անհատականութիւնը, որ իր ժողովուրդին մէջ այդ անբացատրելի ու մեծ սէրը բերած էր: Մեսրոպ Մաշտոցի նման Գիրբերու Գիւտէն առաջ ունեցած էր տեսիլքը իր երաժշտութեան, որ կու գար դարերու խորէն, հայոց լեռներէն, դաշտերէն եւ վանքերէն:

Դժբախտաբար, մեր Յեղասպանութեան տարիները, եկան ցնցելու անմեղ ու ջինջ կեանքը Կոմիտաս Վարդապետի, որուն ամբողջ էութիւնը կը խախտուէր, եւ որ կու գար վերջակէտ դնելու մեր աննման հանճարին ստեղծագործական կեանքին: Փա՛ռք ու պատիւ անոր յիշատակին, որ վառեց կանթեղը մեր եկեղեցական-ազգային երաժշտութեան, եւ մաղթենք որ Հայր Աստուած տայ մեզի նոր Կոմիտասներ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Աստուածաբանութիւնը՝ Աստուծոյ խորհուրդն է դէպի մարդը խոնարհած, մինչ իմաստասիրութիւնը մարդուն խորհուրդն է առ Աստուած բարձրացած:

Մենք երջանիկ կ'ըլլանք միայն՝ ուրիշները երջանկացնելով:

Մօր սիրտը բնութեան գլուխ գործոցն է:

Բանականութիւնը կը յաղթէ երբ լաւ կը վարուի անոնց հետ՝ որոնք զուրկ են անկէ:

Երջանկութիւնը այն գնդակն է որուն ետեւէն կը վազենք որքան ատեն որ այն կը գլորի, ու երբ կանգ առնէ՝ ոտքով կը հարուածենք:

Հաճոյքը կը հաստատուի ցնորքներու վրայ, մինչ երջանկութիւնը՝ ճշմարտութեան վրայ: